

ՀՈՒԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Տաթևիկ Կիրակոսյան

Երևանի պետական համալսարան

Ժամանակակից կյանքում մարդկային հարաբերությունները դիտարկելիս չափազանց ակնհայտ է դառնում հույզերի ակտիվ արտահայտումը: Հույզերը մշտապես եղել են բանականության, լեզվագիտակցության, մշակութային, կրթական և առօրյա վարքի անբաժանելի մասը: Մեր օրերում հավանաբար այս փաստը բացատրվում է աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխություններով, այդ թվում նաև նոր տեղեկատվական տեխնոլոգիաների այդչափ արագ զարգացմամբ: Հաղորդակցման ժամանակակից միջոցները, և հատկապես համացանցը, նպաստում են միջմշակութային հաղորդակցում իրականացնելուն, որն էլ իր հերթին հագեցած է հույզերով: Համացանցային շփումը հաղորդակցում է վիրտուալ միջավայրում, որով էլ պայմանավորված է դրա առանձնահատկությունը:

Քանի որ մարդը հասարակական էակ է, նա անընդհատ այլ մարդկանց հետ շփման կարիք ունի, ինչն էլ բնութագրում է շփումը՝ որպես մարդկային կենսագործունեության պարտադիր պայման: Ինչպես հայտնի է, լեզվի հիմնանպատակը մարդկանց միջև շփում հաստատելն է, որի իրականացումը պայմանավորված է ֆիզիկական, հանրամշակութային և լեզվական գործոններով: Այս է պատճառը, որ առանց շփման անհատի և հասարակության փոխազդեցությունն անհնարին է: Հաղորդակցման միջոցների ընտրության և դրանց իրականացման համար փոխադարձ գործունեության ընթացքում զրուցակիցները իրենց հարմար ծրագիրն են մշակում՝ իրենց տեսակետները փոխանակելու նպատակով: Լեզվաբանները շփումը դիտում են որպես լեզվի հաղորդակցական գործառույթի իրագործում տարբեր խոսքային իրավիճակներում:

Հաղորդակցվողների միջև շփումն իրականանում է լեզվական և արտալեզվական միջոցներով: «Հաղորդակցում» ասելով հասկանում ենք շփումը կարգավորելու նպատակով տեղեկությունների փոխանակման գործընթացը: Լայն իմաստով՝ շփումը դիտվում է որպես փոխադարձ գործունեության և շփման միջոցների մի գործընթաց, որը հնարավորություն է ընձեռում ստեղծելու, փոխանցելու և ընդունելու տարատեսակ տեղեկություններ (Մարկոս 2002):

Հույզերի արտահայտումը հաղորդակցման մեջ երկու և ավելի մարդկանց հույզերի և զգացմունքների փոխանակման միջոց է: Հույզերն արտացոլվում են մարդու յուրաքանչյուր գործունեության ընթացքում, ինչն էլ, ինչպես բազմիցս նշվել է, դրսևորվում է նախ և առաջ լեզվում և լեզվի միջոցով, լինի դա առերես, թե՛ առցանց: Սույն հոդվածում առավելապես կարևորվում է հուզական և արտահայտչական խոսքային ակտերի կիրառման ուսումնասիրությունը և դրանց դրսևորման առանձնահատկությունների քննությունը համացանցային հաղորդակցման մեջ: Հարկ է նշել, որ արտահայտչականությունը, ինչպես հուզականությունը լեզվի զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկն է, քանի որ այն նպաստում է նոր լեզվական միջոցների ստեղծմանը, որոնք էլ իրենց հերթին խթանում են խոսողի/ գրողի մտքերն ու զգացմունքները առավել ծավալուն կերպով փոխանցմանը:

Մարդու հուզական համակարգը, լինելով բարդ համակարգ, բազմակողմանի ուսումնասիրություն է պահանջում առավելապես լեզվաբանական առումով: Օբյեկտիվ իրականության մեջ առարկաները ու երևույթները ճանաչողական քննության ենթարկելիս մարդիկ արձագանքում կամ հակազդում են դրանց տարբեր գնահատականների կամ զգացմունքային տարբեր դրսևորումների միջոցով, ինչն էլ, բնականաբար, արտահայտվում է լեզվում:

Լեզվում հույզերի արտահայտման ուսումնասիրությունը կապվում է հուզականության և արտահայտչականության¹ լեզվական կարգերի բնորոշման հետ: Սույն հոդվածում ևս այս երկու հասկացությունները տարանջատվում են՝ հաշվի առնելով այն փաստը, որ հուզականությունը տեղեկատվական կարգ է, իսկ արտահայտչականությունը՝ ոճական: Գիտական տեքստերում, օրինակ, «հուզականություն» և «արտահայտչականություն» եզրույթների տարբերակման առումով մեծ ներդրում ունի Մ. Նիկիտինը, որը, ուսումնասիրելով բանաստեղծական խոսքի արտահայտչականության իմաստաբանական գործոնները՝ հանգել է այն եզրակացության, որ արտահայտչականությունը մտքից ձևավորված տպավորության ուժն է, դրա արտահայտման միջոցը, որը ճանաչողական բնույթ ունի (Филлимонова 2001; Галкина-Федорук 1957):

Հաղորդակցվողների խոսքը միշտ էլ շատ թե քիչ հուզական և բնական է, լեզվակիրները մեկը մյուսից կարող են կտրուկ տարբերվել՝ ըստ իրենց հուզականության աստիճանի: Կարելի է ասել, որ հուզականությունը յուրաքանչյուր տիպի դիսկուրսի բաղկացուցիչ մասն է կազմում: Դեռ ավելին, հաղորդակցական ակտի հուզականորեն հագեցած լինելու աստիճանը կախված է համատեքստից կամ, լայն իմաստով, խոսքային իրավիճակից, որում այն իրականանում է: Այսպիսով, հաշվի առնելով հույզի հոգեբանության մասին տեսությունները, անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել հույզերի արտահայտման և կիրառման լեզվական մեխանիզմները համացանցային հաղորդակցման մեջ, որում կարող են միաժամանակ իրականանալ լեզվի տեղեկատվական, հուզական/արտահայտչական և խոսքարկման գործառույթները:

Բառերի արտահայտչական երանգավորումը անհնարին կլինի ուսումնասիրել և բացահայտել՝ առանց հաշվի առնելու բառիմաստի հաղորդակցական գործառույթային ոլորտը, որն ընդգրկում է մի կողմից հասցեատիրոջ հարաբերությունը հաղորդագրությունը ստացողի, մյուս կողմից՝ հասցեատիրոջ և իրականության միջև:

Համացանցային հաղորդակցման² նյութն ուսումնասիրելիս հաղորդակցվողները տեղեկացնում են միմյանց իրենց զգացմունքների մասին, վերլուծում են դրանք, ինչպես նաև դրդում հասցեատիրոջը գործել այս կամ այն կերպ և այլն:

Ուսումնասիրենք հետևյալ օրինակները՝

Thank you for your email.

It is really good news that we may pick up the goods, because we are a little late in our timetable. My shipping agent will connect to you very soon, but before it I'll kindly ask you to send the packing list by excel format in order to be able to make some changes in prices and weight mentioned there. Send us please the original ones, because we don't want to be surprised again.

Many thanks and best regards, Ara!

Թեև հաղորդագրությունը գործնական բնույթ է կրում և կարծես թե պետք է գերծ

լինի հուզականությունից կամ արտահայտչականությունից, “good”, “kindly” և նմանատիպ այլ ածականների ու մակբայների շնորհիվ այն է՛լ ավելի ներգործուն է հնչում:

Հաղորդագրություն գրողը տեղեկացնում է գործընկերոջը գործարքը վերսկսելու մասին՝ դրդելով նրան ավելի արդար լինել՝ հետագա խնդիրներից խուսափելու համար: Այսպիսով, հաղորդագրությունն ընդունողի համար հասկանալի է դառնում գործընկերոջ դրական պատասխանը, ինչն էլ, բնականաբար, զոհացնում է նրան:

Հարկ ենք համարում նշել, որ հաղորդագրություններում երախտագիտության, մեղքի և այլ զգացումները հաճախակի կիրառվող էմոտիվներ են (հուզարտահայտչական միավորներ) համարվում, որոնք հիմնականում կիրառվում են հաղորդագրության ներածական մասում և միտված են տեղեկացնելու օգտատերերին այլ զգացումների մասին, ինչպիսիք են, օրինակ, մեղքի, ուրախության, զարմանքի և այլ զգացումները:

A foolish idea! Not at all funny!! No sense of humour; move on and stop pictures like that especially dealing with children!

Օրինակը փաստում է հանդիմանության և մեղքի զգացումների մասին, որոնք կարող են օգտագործվել հանդիմանություն արտահայտող բառերի կիրառմամբ և ուղղակիորեն մեղքի զգացումն արտահայտելու միջոցով:

Հաղորդագրություններում արտահայտչականությունն արտահայտվում է հնչերանգային առանձնահատկություններով և նախադասության համապատասխան տիպով և անմիջական կապ ունի հուզական գնահատականի հետ: Որպես կանոն, այն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ գնահատականը դառնում է որոշակի իրավիճակի անմիջական ազդակը: Եվ այսպես, «հուզականություն» և «արտահայտչականություն» տերմինների տարանջատումը հիմնվում է դրանց տարբեր բնույթի վրա: Լեզվում հուզական միավորները ծառայում են մարդկային զգացողություններն արտահայտելուն, իսկ արտահայտչականները՝ սաստկացնելու կամ շեշտելու պատկերավորությունն ու արտահայտչականությունը թե՛ հույզի, և թե՛ հաղորդակցման ցանկացած այլ տեսակ արտահայտելու համար (Орлова 2009):

Hooray!!! The world is white again! After one day without snow on the ground I was getting positively depressed that I was not going to see it again for many months ahead... What a relief! Me gusta.

Տվյալ օրինակում անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել այլալեզու արտահայտության վրա, որը հաճախակի օգտագործվում է համացանցում տեղ գտած հաղորդագրություններում: Դրա նպատակը ասույթի արտահայտչականությունն է՛լ ավելի սաստկացնելն է, ինչի շնորհիվ տեղի է ունենում հուզականության առաջադրում:

Կարևոր է անդրադառնալ արտահայտչական ասույթներում հաղորդակցվողների արտահայտվելու անկեղծության փաստին, որը նախ և առաջ վկայում է նրանց հոգեվիճակի և որևէ գործողություն կատարելու մտադրության մասին, ինչը չի կարող տեղի ունենալ կեղծ հանգամանքներում:

Արտահայտչական խոսքային ակտերը³ տարբերվում են նախ և առաջ իրենց իլլոկուտիվ նպատակով: Իլլոկուտիվ ակտերի արտահայտչական կարգը որոշելու համար անհրաժեշտ է որոշել նրանց իրականացման լիակատար պայմանները խոսողի արտաբերման ընթացքում (Searle 1986; Трофимова 2008):

Հարկ ենք համարում նշել, որ էքսպրեսիվները կամ արտահայտչական խոսքային ակտերը խոսքային վարքի բանաձևեր են, այսինքն՝ երախտագիտության, ներողամտության և այլնի պայմանական այն արտահայտություններն են, որոնք պայմանավորված են կոնկրետ իրավիճակով, օրինակ՝ հանդիպում, հյուրընկալություն, տոնակատարություններ, նվիրատվություն և այլն:

- *So nice to see that great smile of yours!!!*

- *Oh, Brian, so sweet of you – thank you! It is a rare thing these days, but now I am smiling especially for you.*

Հուզական խոսքային ակտերում հաճախ դժվար է տարբերակել արտահայտչական գործառույթը հուզականից: Այս առումով հարկ ենք համարում պարզաբանել, որ արտահայտչական գործառույթի նպատակը, ի տարբերություն հուզականի, ուղղորդված հույզերի արտահայտումն է, ինչի դեպքում նկատի է առնվում խոսողի գործաբանական միտումը օգտատիրոջ վրա ներգործելու նպատակով՝ հաղորդակցումը տանելով իր իսկ ցանկացած ուղղությամբ, այսինքն՝ ստիպելով նրան ինչ-որ բան անել. բավարարել խնդրանքը, նրա մոտ որոշակի զգացմունքներ արթնացնել և այլն: Արտահայտչական գործառույթի դեպքում հաղորդակցման պարտադիր պայման է համարվում դիմելու գործոնը: Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, արտահայտչական գործառույթ ասելով՝ պետք է հասկանալ ասույթի կամ հաղորդագրության նպատակային սաստկացումը, ինչը ենթադրում է հաղորդակցման ընթացքում ցանկալի ներգործում: Այլ կերպ ասած՝ արտահայտչական գործառույթը ասույթների և հաղորդագրությունների գիտակցված սաստկացումն է, իսկ հուզականը կոչված է պարզապես արտահայտելու հաղորդակցվողների հույզերը՝ առանց հասցեատիրոջ վրա միտումնավոր ներգործում կատարելու (Маховский 2010): Համապատասխանաբար, որպես խոսքային ակտեր հուզական ասույթները պայմանավորված են բանականի նկատմամբ՝ հուզական գնահատականի գերակայությամբ, որն էլ բառային և շարահյուսական մակարդակների փոխազդեցության արդյունք է: Հուզականորեն երանգավորված հաղորդագրությունների կարևոր հատկանիշներից է այն, որ դրանցում, որպես օրենք, հույզերն արտահայտվում են խմբով՝ մի հույզը մյուսի առաջացման պատճառ դառնալով (Izard 1980): Սա էլ բացատրում է այն փաստը, որ տեքստերում էմոտիվները հազվադեպ են առանձին կիրառվում. որքան շատ են դրանք, այնքան ավելի արտահայտիչ և հուզական է հաղորդակցումը, իսկ համացանցայինը՝ առավել ևս:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Բալիի, արտահայտչականությունը իրականության հուզական ընկալումն ու այն հասցեատիրոջը հասցնելու ձգտման արտահայտումն է: Արտահայտչականությունը լեզվական միավորների իմաստային և ոճական հատկանիշների ամբողջությունն է, որոնց շնորհիվ այն արտահայտվում է հաղորդակցական ակտի ժամանակ որպես խոսողի և/կամ նրա ասածի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտելու միջոց:
2. Համացանցային դիսկուրսի ուսումնասիրությունը սկիզբ է առել դեռևս 1984-ից, երբ լեզվաբան Ն. Բարոնը հողված հրատարակեց՝ գրելով համացանցային դիսկուրսի՝ որպես լեզվում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցության, մասին: Հետագայում ուսումնասիրությունները շարունակվեցին, սակայն միայն 1991-ից հետո, Բ. Ֆերարայի, Հ. Բրունների և Գ. Ուիթմորի «Փոխներգործող գրավոր դիսկուրսը որպես ի հայտ եկող նո-

րաստեղծ ժանր» աշխատությունից հետո լեզվաբաններն հատուկ ուշադրություն դարձրեցին համացանցային դիսկուրսին (տես՝ Herring 1994):

3. Ջ. Սըրլը, Ռ. Վունդերլիխն առաջարկում են իրենց դասակարգումը խոսքային ակտերի վերաբերյալ, որի հիմնական չափանիշներն են՝ իլոկուտիվ նպատակը, հարմարվելու ուղղությունը (բառից իրականությունը կամ իրականությունից բառը) և հոգեվիճակի արտահայտումը (համոզմունքները, ցանկությունները, ափսոսանքը և այլն) կամ անկեղծության առկայությունը: Ընդ որում, Ռ. Վունդերլիխի դասակարգման մեջ արտահայտչական ասոյթները բաշխվում են կոմիսիվների և սատիսֆակտիվների դասերի մեջ: (Searle 1986; Wunderlich 1976; Leech 1983):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Галкина-Федорук, Е.М. (1958) *Об экспрессивности и эмоциональности в языке.* // Сб. статей по языкознанию. М.: Изд-во Московского университета.
2. Олешков, М.Ю. (2011) *Прагматика эмотивности в институциональном дискурсе.* // Вестник Минского государственного лингвистического университета. N2 (51). Минск: Изд-во БГУ.
3. Серль, Дж. (1986) *Теория речевых актов.* // Новое в зарубежной лингвистике (выпуск XVII). / Под. ред. Б.Ю. Городецкого. М.: Прогресс.
4. Трофимова, Н.А. (2008) *Экспрессивные речевые акты.* Санкт-Петербург: изд-во ВВМ.
5. Филлимонова, О.Е. (2007) *Эмоциология текста.* Санкт-Петербург: Книжный Дом.
6. Шарков, Ф.И. (2002) *Основы теории коммуникации.* // Социальные отношения. М.: Перспектива.
7. Шаховский, В.И. (2010) *Эмоции.* М.: Либроком.
8. Herring, S.C. (1994) *Computer-Mediated Conversation.* Bloomington: Indiana University.
9. Izard, C.E. (1977) *Human Emotions.* New York: Plenum Press.
10. <www.facebook.com>

Реализация категории эмотивности и экспрессивности в интернет дискурсе

В современной жизни в человеческих отношениях стало весьма очевидным выражение эмоций, которые являются неотъемлемыми компонентами разума, мышления и языкового сознания. В данной статье делается попытка изучить категории эмотивности и экспрессивности в интернет дискурсе. Следует отметить, что экспрессивность и эмоциональность важнейшие стимулы, которые воздействуют на развитие языка, так как они способствуют созданию новых средств, служащих для наиболее яркой и насыщенной передачи мыслей, и чувств говорящего.

The Realization of the Categories of Emotiveness and Expressiveness in the Internet Discourse

At present expression of emotion in the process of communication is gaining greater significance. Emotions form an inseparable part of cognition, mentality, language and thought. The present article attempts at revealing the main features of emotiveness and expressiveness in Internet discourse. It is worth mentioning that both emotiveness and expressiveness are one of the most relevant aspects of the development of any language, as they contribute to the creation of new media that serve to make the speaker's/hearer's speech more impressive.